ՎԱՀՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԴՐՎԱԳՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՐՋԱՆՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ (ՀԱԿԱՍԱԿԱՆ Ա. Ս. ԳՐԻԲՈՅԵԴՈՎԸ)

Հոդվածը անդրադարձ է ռուս դիվանագետ և գրող Ա. Ս. Գրիբոյեդովի գործունեության առանձին դրվագներին, ժամանակակիցների կողմից նրան տրված գնահատականներին և փորձ՝ նորովի վերլուծելու նրա բնավորության որոշ գծերը, որոնք, մեր կարծիքով, հավաքական ամբողջության մեջ դիտելով միայն, կարելի է հնարավորինս ճշմարտացի պատկերացնել Գրիբոյեդով-հուսարի, պոետի, դիվանագետի, տնտեսագետի, ընկերոջ և, վերջապես, քաղաքացու իրական կերպարը:

Խորամուխ լինելով Ա. Ս. Գրիբոյեդովի գործունեության մեջ՝ որոշ դեպքերում կարելի է չհամաձայնել խորհրդային պատմագրության կողմից նրա մասին ստեղծված կարծիքներին, որակումներին, նրա հեղափոխական գործունեության, դիվանագիտական «սխրանքների», դրսևորած մարդկային արժանիքների, ինչպես նաև նրա նահատակության մասին ներկայացվող մեկնաբանություններին:

Հոդվածում խոսքը գնում է Ա. Ս. Գրիբոյեդովի ժամանակակիցների միակողմանի և հակասական վկայություններին, որոնց մեկնաբանությունները կամ բացակայում են, կամ էլ՝ պարզապես շրջանցվել են խորհրդային պատմագրության կողմից:

Ա. Ս. Գրիբոյեդովի բազմաթիվ ժամանակակիցների վկայություններում դրվատանքով է խոսվում նրա բազմիմաց լինելու մասին (ինչի հետ հաստատապես համակարծիք ենք – Վ. Ս.) և, միևնույն ժամանակ, վկայակոչվում են նրա մեծամտությունը, իրենով չափից ավելի տարվելը, եսասիրությունը, անհաստատ լինելը, երբեմն կնամոլության հասնող կնամեծարությունը, դեսպան դառնալու ցանկությունը կամ հակառակը, ակնհայտ ծանձրույթն ու իր գործը չսիրելը, չարախոսությունները, երախտամոռությունը և այլն: Այս ամենը բնական մարդկայն թերություններ ու թուլություններ են, և մենք փորձում ենք դրանց անդրադառնալ, առանց չարախոսելու միտումի, բայց եթե ժամանակակիցներից ոմանք ինչ-ինչ պատճառներով դրանք անտեսել են, ապա խորհրդային պատմագրության ներկայացուցիչները գաղափարական կապանքներով կաշկանդվածության պատճառով միայն ծաղկաքաղի մեթոդով են օգտագործել Ա. Ս. Գրիբոյեդովի ժամանակակիցներ Ֆ. Վ. Բուլգարինի, Ստ. Ն.

Բեգիչևի, Ն. Վ. Շիմանովսկու, Դ. Ի. Զավալիշինի, Ն. Ա. Կախովսկու, Ն. Ն. Մուրավյով-Կարսկու, Դ. Վ. Դավիդովի և այլոց հուշերն ու մտորումները:[1]

Ի Ա. Ս. Գրիբոյեդովի մտերիմ ընկեր Ֆ. Վ. Բուլգարինը գրում է, որ իր վարքագծով և բնավորությամբ Գրիբոյեդովը ծեռք է բերել անգլիական ողջ դեսպանության հարգանքը Թավրիզում, ինչպես նաև պարսից գահաժառանգ Աբբաս-Միրզայի հատուկ բարեհաճությունը, որ գահաժառանգն անկեղծ սիրում էր Գրիբոյեդովին և հաճույք էր ստանում նրա հետ զրուցելիս:[2]

Սա հակասում է Ա. Ս. Գրիբոյեդովի վկայություններին՝ Աբբաս-Միրզայի հետ հարաբերությունների կապակցությամբ:[3]

Պարզ չէ, թե ինչ տվյալներից ելնելով է այս հանգամանքը պնդում Ֆ. Բուլգարինը: Կարծում ենք, որ այդ մասին նա կարող էր իմանալ միայն անմիջապես Ա. Գրիբոյեդովից, իսկ այդ մասին ոչ մի ապացույց ու մեկնաբանություն չկա: Ֆ. Բուլգարինը ավելացնում է, որ «պարսից բոլոր գերաստիճան պաշտոնյաները նույնպես հարգում էին Գրիբոյեդովին. նա մեծապես նպաստեց Աբբաս-Միրզայի և Վրաստանում մեր կառավարչության միջև բարի համաձայնությանը...»:[4]

Սա չի լուսաբանվել խորհրդային շրջանում: Անգլիացիների հետ հարաբերությունների հարցում Ֆ. Բուլգարինի վկայություններին հակասում է դեսպան Վիլլոքի հետ Ա. Ս. Գրիբոյեդովի բախումը, իսկ պարսիկների և Վրաստանի կառավարչության միջև բարի համաձայնության կապակցությամբ հարց է ծագում՝ իսկ ո՞վ էր և ի՞նչ էր անում Ս. Ի. Մազարովիչը: Ֆ. Բուլգարինն անտեսում է նրա դերը: Ռուս ռազմագերիների հարցում Ֆ. Բուլգարինի վկայությունները կրկին հակասում են Ա. Ս. Գրիբոյեդովի պատմածներին:[5] Ի դեպ, Ս. Մազարովիչին բարձր էր գնահատում Դ. Վ. Դավիդովը:[6]

Խորհրդային գրիբոյեդովագետները հիմնականում թերագնահատում են Ս. Մազարովիչին՝ անընդհատ շեշտելով, որ նա օտարազգի (վենետիկցի – Վ. Ս.) բժիշկ էր, մոռանալով, որ Գրիբոյեդովն էլ քերական ու երաժիշտ էր, դիվանագիտական հատուկ կրթություն չէր ստացել, իսկ նրա ակունքներն էլ

---

[1] Грибоедов, его жизнь и гибель в мемуарах современников, Ред. и примеч. Зин. Давидова, Изд-во "Красная Газета" Ленинград, 1929г., 352 с.

[2] Նույն տեղում, էջ 13:

[3] А. С. Грибоедов, Сочинения в двух томах, т.2, Библ. "Огонек", Изд. "Правда", М. 1971г. ("С. И. Мазаровичу", с. 199, "П. А. Катенину", с. 202): Տե՛ս նաև՝ Ա. Ս. Գրիբոյեդով, «ճանապարհորդական նոթեր» Կովկաս-Պարսկաստան, թարգմ. Ի. Ենեկոլոպովի, Հայպետհրատ, Երևան, 1945, էջ 49:

[4] А. С. Грибоедов, его жизнь и гибель...с. 13, Տե՛ս նաև՝ Դ. Սմիռնովի՝ նույնպես անապացույց նմանատիպ վկայությունը՝ նշվ. աշխ. էջ 237-238:

[5] Шостакович С. В. Дипломатическая деятельность А. С. Грибоедова, Изд. Социально-экономической литературы, М. 1960, с. 62-63, Տե՛ս նաև՝ А. С. Грибоедов Сочинения. Гос изд. худ. литературы, М-Л, 1959г, с. 421-422.

[6] Դ. Դավիդով, Ռազմական հուշեր, թարգմ. Հ. Մազմանյանի, Հայպետհրատ, Երևան, 1942թ., էջ 525:

(Գրիբովսկի – Վ. Ս.) լեհական էին: Այն կարծիքն է ստեղծվում, որ ռուսական կառավարությունը ճարահատյալ էր Մազարովիչին նշանակել որպես հավատարմատար:

Ֆ. Բուլգարինը գրում է, որ Ս. Ա. Գրիբոյեդովը Պարսկաստանում հաստատված և զինվորական ծառայության մտած ռուսներին համոզել է վերադառնալ հայրենիք և նրանց ջոկատը ետ է բերել՝ չարացած պարսիկների կողմից բազմիցս ենթարկվելով մահացու վտանգի:[7] Հետո փաստում է, որ դա չի խանգարել, որ Աբբաս-Միրզան շահից խնդրի շքանշանով պարգևատրել Ա. Գրիբոյեդովին: Անհասկանալի է, թե ինչի համար էր պարգևատրվելու: Եթե նրան հարգում էին բոլոր «գերաստիճան պարսիկ պաշտոնյաները», ապա ո՞վ էր նրա համար մահացու վտանգ ներկայացնում: Մի՞թե հասարակ պարսիկները, որոնց մոտ, հաստատ այդ զինվորները չէին ծառայում (չպետք է մոռանալ, որ շատ պարսկահպատակներ, նույնիսկ մահմեդական շատ խաներ էլ ռուսների կողմն էին անցնում): Իսկ Ս. Մազարովիչին այդ «մահացու վտանգը» չէ՞ր սպառնում:

Այստեղ տեղին է ներկայացնել Ն.Սուրավյով-Կարսկու (1822թ. փետրվարի 2-ի թվագրությամբ) հուշերից մի վկայություն: Այսպես, Ա. Գրիբոյեդովը պատմել է նրան, որ Պետերբուրգից պարսից արքունիքին ուղղված թղթեր են ստացվել, որտեղ պարսիկներին տեղեկացվել է, որ թուրքերի պահվածքը վերջիններիս վրա է հրավիրել կայսեր ցասումը: Ըստ ռուսական կողմի՝ թուրքերը կայսրին պատերազմի են դրդել, հետևաբար անհրաժեշտ է եղել Աբբաս-Միրզային բացատրել, որ կայսրը ցանկացել է, որ բոլոր ժողովուրդները իմանան, որ նվաճումների հանդեպ իր կիրքը չէ, որ դրան է մղել, այլ՝ թուրքերի ոչ ճիշտ արարքները: Ա. Գրիբոյեդովն ուղարկվել է այդ ամենն Աբբաս-Միրզային բացատրելու և նշելու, որ կայսրը դաշնակիցներ չի պահանջում, այլ միայն հասկացնում է դրա մասին: Ուրախացած Աբբաս-Միրզան խոստացել և թուրքերի դեմ է հանել 50.000 զինվոր: Մյուս օրը Աբբաս-Միրզային տեսակցել է հավատարմատար Ս. Մազարովիչը, կրկին շոշափել է նույն թեման, բայց, փոխանակ պարկեշտություն պահպանելու, Աբբաս-Միրզայից խնդրել է դաշնակցել Ռուսաստանին, և երբ վերջինս համաձայնել է, Ս. Մազարովիչը «խլել է» նրա ձեռքը և ի նշան շնորհակալության, համբուրել է այն: *«Ահա մեր ծառայության մեջ օտարերկրացուն, վարձկանին վայել արարք»* - ասել է Ա. Գրիբոյեդովը:[8]

Այստեղ Ա. Գրիբոյեդովի պատմածի մեջ քողարկված անորոշություն կա. նախ՝ բացահայտորեն փորձ է արված նսեմացնել Ս. Մազարովիչին (օտարերկրացի, վարձկան – Վ. Ս.) և առաջին պլան մղել իր դիվանագիտական հատկանիշները, երկրորդ՝ կայսրը նման հիշեցումով անմիջապես շահին չի դիմել (անկախ նրանից, որ արտաքին քաղաքական հարցերի մենաշնորհը

---

[7] Грибоедов, его жизнь и гибель...с. 13.
[8] Грибоедов, его жизнь и гибель...с. 115-116.

հանձնված էր Նայիբ-սուլթան Աբբաս-Միրզային), այլ, խախտելով էթիկետը, բանակցել է գահաժառանգի հետ (ամեն դեպքում, Պետերբուրգից ստացված թղթերը նոտայի իմաստ ունեին, հետևաբար պետք է, որ կայսեր կնիքն ու ստորագրությունը կրեին), երրորդ՝ ի՞նչ իմաստ ուներ Ս. Մազարովիչի կողմից Աբբաս-Միրզայի մոտ ուղարկել Ա. Գրիբոյեդովին (որն ընդամենը քարտուղար էր – Վ. Ս.) և հաջորդ օրն անձամբ գնալ նրա մոտ նույն հարցի շուրջ զրուցելու, չորրորդ՝ արդյոք Աբբաս-Միրզայի ձեռքը համբուրելիս ներկա եղե՞լ է Ա. Գրիբոյեդովը: Եթե այո, ապա համոզված ենք, որ հենց տեղում նա չէր զսպի և գոնե սպանիչ, սառը ծաղրով կխոցեր Ս. Մազարովիչին: Իսկ եթե նա ներկա չի եղել, այդ «անպարկեշտ» արարքի մասին պետք է, որ իմացած լիներ արդեն տարածվող, շրջանառվող խոսակցություններից (նաև՝ անգլիացիների կողմից – Վ. Ս.):

Սակայն այդ մասին Ա. Գրիբոյեդովն էլ չի նշում իր ընկերներին այդ ժամանակ և հետո ուղղված նամակներում: Որտեղի՞ց է, ուրեմն, այդ մասին իմացել Ա. Գրիբոյեդովը: Կարծում ենք, որ Ս. Մազարովիչը, եթե նույնիսկ դա եղած լիներ, նման բանը չէր ասի Ա. Գրիբոյեդովին: Գեներալ Դ. Դավիդովը նշում է, որ Ա. Գրիբոյեդովը, լինելով Ս. Մազարովիչի դեսպանության կազմում, «ոչինչ չսովորեց այն վերաբերմունքից, որն անհրաժեշտ էր պարսիկների ազգային ինքնասիրությունը, սովորույթներն ու բարքերը հարգելու կապակցությամբ: Նա չէր կարողանում տարբերություն դնել «զիջողականության» և «կտրուկ պահանջների միջև»:[9]

Զարախոսության ու մեծամտության այս օրինակը ևս վերլուծության չի արժանացել խորհրդային շրջանում:

II Ըստ Ն. Մուրավյովի և Պ. Ն. Երմոլովի՝ Վ. Կ. Կյուխելբեկերի և ոմն Պոխվիսնևի միջև ծագած վիճաբանության առիթը տվել է Ա. Գրիբոյեդովը, և Վ. Կ. Կյուխելբեկերը գործել է նրա խորհրդով: Դա հանգեցրել է մենամարտի, բայց այն բարեհաջող ավարտ է ունեցել:[10]

Հիշեցնենք, որ համարյա նույն սցենարով է տեղի ունեցել Վ. Վ. Շերեմետևի և Ա. Պ. Զավադովսկու միջև կայացած ողբերգական մենամարտը: Չէ՞ որ այն ժամանակ, չգիտես թե ինչ նկատառումներով, Ա. Գրիբոյեդովը Վ. Շերեմետևի սիրուհի Ա. Ի. Իստոմինային բերել է Ա. Պ. Զավադովսկու տուն, ինչն էլ պատճառ էր դարձել ողբերգության: Վերջինս, ինչպես տեսնում ենք, դաս չի եղել Ա. Գրիբոյեդովին: Խառնակչության հարցերում նրա հակումը ևս անտեսվել է:

Ժամանակակիցները (նաև՝ Ն.Մուրավյով-Կարսկին)[11] միաբերան հավաստում են նրա բարձր զարգացածությունը, խելքը, ընդունակությունները, տարա-

---

[9] Դ. Դավիդով. նշվ. աշխ.: էջ 526:
[10] Грибоедов, его жизнь и гибель...с. 118.
[11] Նույն տեղում, էջ 131.

տեսակ գիտությունների մեջ խորամուխ լինելը, բայց չեն բացարձականացնում այնպես, ինչպես Ֆ. Բուլգարինը: Նրանցից շատերը միաժամանակ վկայում են նաև Ա. Գրիբոյեդովի բազում արատները: Ֆ. Բուլգարինի այն վկայությունը, թե Ա. Գրիբոյեդովը զգացել է բարձրաշխարհիկ կապերի ոչնչությունը, վեր էր կանգնած կապերի, հարստության և պատիվների արժանանալու մանրախնդրությունից, որ նրան թշնամանում էին իր մաքուր զգացմունքների համար[12], միակողմանի է և փորձ է արված բացարձականացնելու Ա.Գրիբոյեդովի արժանիքները: Իսկ այն, որ նա հարգում էր վաստակավոր և արժանավոր մարդկանց կոչումները, չէր խոնարհվում ճակատագրի սիրեցյալների հանդեպ[13], չեն ապացուցվում Ս. Մազարովիչի հանդեպ նրա վերաբերմունքի, Ի Պասկևիչի մոտ ծառայության, «անպատիվ մարդկանց խորհրդին հետևելու և ճշմարիտ ուղուց շեղվելու» մասին Ա. Գրիբոյեդովի, ինչպես նաև նրա և նրա քեռու բնավորությունների նույնության մասին վկայություններով:

III Հակասություններ կան խորհրդային պատմագրության և Ա. Գրիբոյեդովի ժամանակակիցների վկայություններում՝ ցարական ինքնակալության նկատմամբ նրա վերաբերմունքի հարցում: Եթե նա ցարիզմի դեմ պայքարի համոզված մարտիկ էր, հեղափոխական, ապա ինչպե՞ս մեկնաբանել հետևյալը:

1825թ. դեկտեմբերի 14-ի հետ կապված նրա ձերբակալման մասին Ֆ. Բուլգարինը գրում է. «Չգիտեին Գրիբոյեդովին և իմացան նրան: Նրա ազնվական մտքերը, շիտակությունը, նրա գործերի, մտադրությունների մաքրությունն արժանացան միապետի ողորմած ուշադրությանը: Գրիբոյեդովը բախտ ունեցավ ներկայանալու ինքնակալ կայսրին և այդ պահից հոգով սիրեց միապետին՝ իբրև վեհապետի և՝ իբրև մարդու...»:[14] Խոսքը Նիկոլայ I-ի մասին է: Սա հաստատվում է Նիկոլայ կայսրին Ա. Գրիբոյեդովի հղած նամակով, որտեղ նա ներկայացնում է իր անմեղ լինելու հանգամանքը և խնդրում, որ իրեն ազատ արձակեն:[15]

---

[12] Նույն տեղում, էջ 16:

[13] Նույն տեղում, էջ 16:

[14] Грибоедов, его жизнь и гибель...с. 17.

[15] А. С. Грибоедов, Сочинения, т.2, с. 260. Տե՛ս նաև Грибоедов, его жизнь и гибель... "Рассказы о Грибоедове", Д. Смирнов, с. 231-232, (այստեղ Դ. Սմիռնովը վկայում է, որ ըստ Ստ. Բեգիչևի, դեկաբրիստներին Ա. Գրիբոյեդովը համարել է«հիմարներ»: Իսկ նույն գրքի էջ 280-281-ում Դ. Սմիռնովի և Ա. Ժանդրի զրույցն է այն մասին, թե ինչ է մտածում Ա. Ժանդրը՝ դեկաբրիստների ապստամբությանը Ա. Գրիբոյեդովի մասնակցության մասին և ինչ են նշանակում Ա. Գրիբոյեդովի այն խոսքերը, թե «պրապորշչիկներից 100 մարդ փորձում են փոխել Ռուսատանի քաղաքական կացությունը»: Ա. Ժանդրը պատասխանել է, որ դա ասվել է՝ նկատի ունենալով քաղաքական կացությունը փոխելու ձևին, որը Ա. Գրիբոյեդովը չի ընդունել, բայց գործի անհրաժեշտության և արդարության մեջ չի կասկածել: Այս հարցին անդրադարձել է նաև Մ. Վ. Նեչկինան, որը ապագայում կփորձենք վերլուծել - Ա. Ս.:

Ա. Գրիբոյեդովը Պ. Ա. Կատենինին 1825թ. փետրվարի 14-ին գրած նամակի հետգրության մեջ ինչ-որ կապակցությամբ խորհուրդ է տալիս վճռել և խնդրանքով դիմել ուղիղ վեհապետին՝ ասելով, որ «Բացի նրա սեփական հոգուց, ոչ մեկի հոգու վրա հույս մի՛ դիր. ոչ ոք հարազատ եղբոր համար ջանք չի թափի»:[16] Սա էլ ասվել է Ալեքսանդր I-ի հասցեին:

Կոմս Ի. Պասկևիչին 1827թ. հուլիսի 30-ին Կարաբաբայից գրած զեկուցագրում Ա. Գրիբոյեդովը, խոսելով ռուսական հողերի վրա պարսիկների հարձակման առիթով Աբբաս-Միրզային հանդիմանելու մասին, ասում է, որ «*վիրավորված է նաև անձամբ կայսեր անձը, իսկ մեզ մոտ, վեհապետի պատիվը ժողովրդի պատիվն է*»:[17] Կարդալով այսքանը (նաև տողատակի N 23 հղումը)՝ կարծում ենք, որ այս վկայությունները չեն խոսում Ա. Գրիբոյեդովի՝ հակամիապետական կամ ցարական ինքնակալության դեմ պայքարի համոզված մարտիկ լինելու օգտին: Առաջադեմ գաղափարներ ունենալը չի նշանակում հեղափոխական լինել:

Ա. Գրիբոյեդովի վերոհիշյալ նամակներից, թերևս կարելի է ընդամենը տիրասիրության և միապետության համոզված կողմնակցի մասին պատկերացում կազմել: Այս հանգամանքն էլ է շրջանցվել:

V Անդրադառնանք նաև Ա. Գրիբոյեդովի ծառայողական պարտականությունների և Պարսկաստանում նրա՝ դեսպան դառնալու մասին ժամանակակիցների վկայություններին:

Ֆ. Բուլգարինը վկայում է, որ Ա. Գրիբոյեդովն առանց բացակայելու կոմս Պասկևիչ-Երիվանսկու հետ էր և *համուզքով էր կատարում զինվորական գործերն* ու չէր թաքնվում վտանգներից: Սա վերաբերում է 1827 - 1828 թվականներին: Սակայն նրա «Շարադրություններ»-ում բազմիցս կարելի է հանդիպել Ն. Ա. Կախովսկուն (1820թ. հունիսի 25)[18], Ա. Ի. Ռիխլևսկուն (1820թ. հունիսի 25)[19], «Անծանոթին» (1820թ. նոյեմբեր)[20], Ա. Ա. Ժանդրին և Վ. Ա. Միկլաշևիչային (1825թ. դեկտեմբերի 18)[21], Ստ. Ն. Բեգիչևին (1825թ. դեկտեմբերի 7)[22], Ա. Ա. Բեստուժևին (1825 նոյեմբերի 22)[23], նույն Ֆ. Վ. Բուլգարինին (1827թ. ապրիլի 16)[24] հղած նամակներում իր արտահայտած տրտունջներին, բողոքներին, ցանցրությունին:

---

[16] А. С. Грибоедов, Сочинения, т.2, с. 242.
[17] Նույն տեղում, էջ 264. Կայսրի մասին գովեստով է խոսում նա Վ. Ա. Միկլաշևիչային ուղղված 1826թ. հունիսի 6-ի նամակում, էջ 264:
[18] Նույն տեղում, էջ 207-208:
[19] Նույն տեղում, էջ 208-210:
[20] Նույն տեղում, էջ 213-214:
[21] Նույն տեղում, էջ 258-259:
[22] Նույն տեղում, էջ 256-258:
[23] Նույն տեղում, էջ 252-253:
[24] Նույն տեղում, էջ 271-273:

Ն. Կախտվսկուն Ա. Գրիբոյեդովը հանձնում է իրեն «փրկել որոտից», քանի որ գլխավոր հրամանատարին (Ա. Պ. Երմոլովին – Վ. Ա.) խնդրել է իրեն ետ կանչել Թիֆլիս՝ որպես դատավոր կամ ուսուցիչ աշխատելու, քանի որ *նույնիսկ հանուն «Օրանց-Ջերի գանձերի, կովկասից այս կողմ (Պարսկաստանում – Վ. Ա.) ոչ մի տեղ և ոչ մի անգամ ինքը հավիտյան չի բնակվի» (տես տողատակի N 26 հղումը)*:

Ա. Ի. Ռիխլևկուն նույն օրը գրած նամակում Ա. Գրիբոյեդովը գրում է. *«Կործանվի այն օրը, երբ ես հագա Արտաքին գործերի կոլեգիայի համազգեստ և կործանվի այն առավոտը, երբ ինձ կոչեցին տիտղոսավոր խորհրդական...»* (տես տողատակի N 27 հղումը): Իսկ այն, որ Ֆ. Բուլգարինին 1827թ. ապրիլի 16-ին Ա. Գրիբոյեդովը գրում է, որ հենց ավարտվի պատերազմը, ինքը կհեռանա, «որովհետև մարդիկ մանր են, նրանց գործերը՝ հիմար, իր հոգին կարծրանում է, դատողությունը՝ մթագնում, բարոյականությունը մեռնում է... *որ ինքը ծնված է այլ ասպարեզում գործելու համար...»* (տես տողատակի N 32 հղումը) ցույց է տալիս, որ Ֆ. Բուլգարինը հակասում է և իր վերոհիշյալ վկայությանը, և վերը թվարկած անձանց ուղղված Ա. Գրիբոյեդովի խոստովանություններին: Բայց իր նամակներում, մասնավոր զրույցներում և պահվածքով Ա. Գրիբոյեդովը հաճախ նաև հակասում է ինքն իրեն, ինչը վկայում է նրա անհաստատ բնավորության մասին: Այսպես՝ Ա. Գրիբոյեդովի մտերիմ Ստ. Ն. Բեգիչևը նույնպես վկայում է նրա արտակարգ ընդունակությունների ու փայլուն կրթության մասին[25] և տեղեկություններ է հաղորդում Ա. Գրիբոյեդովի՝ ծառայության անցնելու մասին: Ստ. Բեգիչևը, որը ևս Ս. Մազարովիչին համարում է խելացի և հիանալի անձնավորություն, վկայում է, որ Ս. Մազարովիչն է առաջարկել Ա. Գրիբոյեդովին իր հետ մեկնել Պարսկաստան: Իսկ Ա. Ստուրձան վկայում է, որ, Բատյուշկովի նման, *Ա. Գրիբոյեդովն էլ է ձգտել դիվանագիտական պաշտոնի և այդ նպատակի համար ծանոթություն է փնտրել իր հետ.*

Արտաքին գործոց նախարարությունում իր ունեցած դիրքի շնորհիվ Ա. Ստուրձան միջնորդել է Ա. Գրիբոյեդովի համար և նրան առաջարկել է գրասենյակային աստիճանավորի պաշտոն կամ Ֆիլադելֆիայում կամ էլ Թեհրանում՝ բացատրելով դրանց կարևորությունը: Նա Ա. Գրիբոյեդովին ծանոթացրել է Ս. Մազարովիչի հետ: Ա. Գրիբոյեդովն ընտրել է Պարսկաստանը:[26] Այսինքն՝ ինքն է ընտրել իր ճանապարհը.

Ստ. Բեգիչևը, վկայելով Թուրքմենչայի պայմանագիրը կայսրին հասցնելուց հետո Ա. Գրիբոյեդովի՝ շռայլ պարգևների արժանանալու մասին, միաժամանակ նշում է, որ նա մռայլ էր՝ դեսպան նշանակվելու առիթով:

---

[25] Грибоедов, его жизнь и гибель...с. 37-41.

[26] "Московитянин" 1851г. ноябрь. "Беседа любителей Русского слова и Арзамас в царствование Александра I и мои воспоминания" с. 19.

Ա. Գրիբոյեդովի դեսպան դառնալ չցանկանալու մասին վկայում են խորհրդային պատմաբանները[27] և չեն փորձում մեկնաբանել Դ. Դավիդովի վկայությունը, թե ինչու է Ա. Գրիբոյեդովն ասել, որ «Պասկևիչն այնքան անտանելի է, որ ես Վրաստան կվերադառնամ ոչ այլ կերպ, բայց եթե իբրև դեսպան՝ պարսկական արքունիքին կից»:[28]

Դեսպան դառնալու մասին վկայություններում Ա. Գրիբոյեդովը ներկայացնում է իր և Արտաքին գործերի նախարար կոմս Նեսսելրոդեի հետ կայացած խոսակցությունը, որից պարզ է դառնում, որ ինքը ցանկացել է որպես դեսպան մեկնել Պարսկաստան և նույնիսկ առաջարկել է գնալ ոչ թե որպես հավատարմատար, այլ որպես լիազոր դեսպան:[29]

Ըստ Ստ. Բեգիչևի՝ Ա. Գրիբոյեդովն առարկել է կոմս Նեսսելրոդեին՝ ասելով, որ Պարսկաստանում Ռուսաստանին անհրաժեշտ է ունենալ իր դեսպանը, որը ոչնչով չզիջի անգլիական դեսպանին:

Միանշանակ է, որ Մերձավոր Արևելքում և Ասիայում սուր կերպով բախվում էին ռուս-անգլիական գաղութատիրական շահերը, բայց Ա. Գրիբոյեդովի վերը նշված փաստարկը (անգլիացիներին ինչ-որ բանում զիջել կամ չզիջելու հարցում) տրամաբանական չէ: Չէ՞ որ ժամանակին Պարսկաստանում ռուսական հավատարմատար Ս. Մազարովիչի բացակայության ժամանակ ինքը հանդգնել էր շրջանցել իր պետին և «չզիջել» անգլիական հավատարմատար Վիլլոքին: Եվ դա այն դեպքում, երբ Ա. Գրիբոյեդովն ընդամենը «ռուսական առաքելության քարտուղար» էր:[30] Ի դեպ, այս կապակցությամբ նա արժանացել էր կոմս Նեսսելրոդեի դիտողությանը:[31]

Դեսպան դառնալու մասին Ա. Գրիբոյեդովի առաջարկից հետո կոմս Նեսսելրոդեի «ժպտալն ու լռելը»[32] պերճախոս էին: Կոմս Նեսսելրոդեի «ժպտալը» Ա. Գրիբոյեդովը Ստ. Բեգիչևին մեկնաբանել է նրանով, որ կոմսը *կարծել է, թե պատվասիրությունից ելնելով է, որ ինքը դեսպանի պաշտոն է ուզում.*

Խորհրդային շրջանում չի պարզաբանվել, թե ինչո՞ւ կոմս Նեսսելրոդեն չպետք է այդպես ենթադրեր: Մի՞թե Արտաքին գործերի գերատեսչության «ծեր գայլը» պատահականորեն էր կանչել Ա. Գրիբոյեդովին կամ չէր կարողանում

---

[27] Վ. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1947, էջ 25, 169, տե՛ս նաև՝ И. Ениколопов, Грибоедов и Восток, Ереван, Айпетрат, 1954, с. 29.

[28] Դ. Դավիդով, նշվ. աշխ., էջ 525-526:

[29] Грибоедов, его жизнь и гибель...с. 46.

[30] И. Ениколопов, Грибоедов и Восток, Ереван, Айпетрат, 1954г., с. 23-25 (հղում է արված "Депеши Российского поверенного в Персии по разным предметам, ЦГИА Груз. ССР).

[31] Шостакович С. В., Նշվ. աշխ. էջ 63, 70 (հղում է արված Д. А. Смирнов, А. С. Грибоедов, I Черновая тетрадь Грибоедова, "Русское слово" апрель 1859, с. 78-79, Տե՛ս նաև՝ А. С. Грибоедов, Сочинения, Гос. издат. худ. лит. М. – Л. 1959, с. 637.

[32] Грибоедов, его жизнь и гибель...с. 46.

զատել հավատարմատարի կամ դեսպանի առաքելության տարբերությունները: Սի՞թե նա չէր կարող Ա. Կ. Ամբուրգերին, Ի. Օ. Սիմոնիչին կամ թեկուզ Ս. Մազարովիչին նշանակել (վերջինս Ռուսաստանից հեռանալու մտադրություն չուներ, հետագայում՝ 1836թ. ընդունեց ռուսահպատակություն – Վ.Ս.): Կարծում ենք, որ այստեղ Ա.Գրիբոյեդովի մոր՝ Նաստասյա Ֆեոդորովնայի և ամենազոր Ի. Պասկևիչի շատ կարևոր դերակատարումն է եղել (վերևում նշեցինք, որ վերջինիս նկատմամբ էլ էր Ա. Գրիբոյեդովը ապերախտ կերպով արտահայտվում):

Ի. Պասկևիչը Ա. Գրիբոյեդովին պատահականորեն չէր ուղարկել Պետերբուրգ՝ Թուրքմենչայի պայմանագիրը կայսրին ներկայացնելու: Այս ամենը տրամաբանական և կանխավ մտածված քայլեր էին: Կարծում ենք, որ թե Ա. Ամբուրգերը, թե Ի. Սիմոնիչը, թե բարոն Կ. Բոդեն և նույնիսկ Ի. Մալցովը Թուրքմենչայից հետո ի վիճակի էին ճկուն կերպով կատարել իրենց առջև դրված պարտականությունները: Ինչ վերաբերում է պարսկերենի իմացությանը, ապա դա ևս խնդիր չէր նախարարության համար, որովհետև Կովկասում պարսկերենին և այլ լեզուներին տիրապետող հայեր ու վրացիներ շատ կային, որոնք կարող էին ծառայել Ռուսաստանին (Ա. Գրիբոյեդովի դեսպանության կազմում էլ թարգմանիչներ կային – Վ. Ս.):

Չպետք է բացառել, որ Ա. Գրիբոյեդովը քաջ գիտակցում էր, որ պալատական խորհրդականից միանգամից դառնում էր գեներալ-նախարար՝ այստեղից առատության եղջյուրից բխող ամեն տեսակի նյութական և հասարակական բարձր դիրքի հետ կապված բարիքներով հանդերձ, ինչով նա կարող էր իր ընտանիքի ֆինանսական ոչ բարվոք վիճակը կայունացնել:

Վերջին հաշվով, ի՞նչ կարող էր սպառնալ Ա. Գրիբոյեդովին, եթե նա ուղղակիորեն, կտրականապես հրաժարվեր այդ պաշտոնից կամ պնդեր, որ իրեն ուրիշ տեղ նշանակեն: Նա կարող էր ինչ-որ հիվանդություն կամ կլիմայի կործանարար լինելը պատճառ բերել (նա հաճախ տենդի նոպաներ էր ունենում – Վ. Ս.): Դեսպան դառնալ չցանկանալը, դատելով նրա նամակներից, թերևս կարող է կապված լինել նաև նրա հետ, որ արդեն մի քանի տարի, շփվելով դիվանագիտական գործերի հետ, հաստատ համոզվել էր, որ դա իր տեղը չէ, որ ինքը «ծնված է այլ ասպարեզներում գործելու համար», այսինքն՝ հոգով ու սրտով պոետ էր և երաժիշտ: Այս հանգամանքներն էլ չեն մեկնաբանվել:

VI Եթե Ա. Գրիբոյեդովին դեսպան նշանակելը խորհրդային ուսումնասիրողների կողմից ներկայացվում է որպես աքսորի պես մի բան, ապա դեկաբրիստների հետ կապերի մեջ կասկածվող Ա. Պ. Երմոլովը կամ մյուսները ինչո՞վ հարմար չէին այդ դերի համար: Դ. Դավիդովը վկայում է Ա. Պ. Երմոլովի դիվանագիտական մեծ կարողությունների մասին[33]: Այս պարագան ևս անտեսվել է: Անտեսվել է, որովհետև անհրաժեշտ է եղել ցույց տալ, որ Ա. Գրիբոյեդովը

---

[33] Դ. Դավիդով, նշվ. աշխ. էջ 525, 526, 528:

«հեղափոխական» էր և դրա համար էլ, որպես պատիժ, նրան ուղարկել են հեռու Պարսկաստան: Բայց անտեսվել է մի շատ կարևոր հանգամանք ևս: Դա այն է, որ ռուսական արքունիքը երբեք հեղափոխական անձնավորությանը չէր նշանակի նման պաշտոնում, այն էլ՝ պարտված երկրում, որտեղ դեռ շարունակվում էին այլ երկրների դիվանագիտական խաղերն ու խարդավանքները: Եզրակացությունն այն է, որ իր մասնագիտությունը նա չէր սիրում, բայց ձգտել է նշանակմամբ՝ բարձր դիրքի և նյութական բարվոք վիճակի հասնելու համար:

VII Հենվելով Ա. Գրիբոյեդովի ժամանակակիցների վկայությունների վրա՝ խորհրդային գրիբոյեդովագետները Պարսկաստանից նրա՝ կենդանի չվերադառնալու «կանխազգացումներին» քիչ է մնում, թե «մարգարեանալու» հատկանիշներ վերագրեն:

Պետք է կարծել, որ իր մոտալուտ վախճանը «կանխազգալու» հարցը կապված է այն բանի հետ, որ քաջածանոթ լինելով Արևելքի բարքերին ու սովորույթներին, արևելյան երկերեսանիությանը, տիրակալների ուխտադրժությանը, ինչպես նաև աչքի առաջ ունենալով ոչ հեռու անցյալում՝ 1813թ. Գյուլիստանի պայմանագրի խախտումը պարսիկների կողմից՝ Ա. Գրիբոյեդովը պարզապես վստահ չէր, որ պարսիկների հետ նոր պայմանագիրը երկար կպահպանվի ու չի խախտվի միջազգային ներհակ շահերի բախման հետևանքով: Իսկ նման դեպքերում, ինչպես հայտնի է (օրինակ՝ Թուրքիայում), նոր պատերազմի դեպքում առաջին հարվածը հասցվում էր հենց այդ երկրներում եղած հակառակորդ երկրի դեսպանությանը: Ն. Շիմանովսկին, օրինակ, վկայում է, որ պարսիկների հետ լարված հարաբերությունների պատճառով ռուսական առաքելության ղեկավար Ս. Մազարովիչն արդեն բնակվում էր Թիֆլիսում:[34] Ուրեմն մտավախություն կար, որ դեսպանության աշխատողներին կարող էր վտանգ սպառնալ և միգուցե Ա. Գրիբոյեդովն էլ կանխազգում էր դա:

VIII Ա. Գրիբոյեդովը 1820թ. մայիսի 3-ին Ն. Ա. Կախովսկուն պատմում էր իր սիրային արկածների (Պարսկաստանում – Վ.Ս.) և *Ս. Մազարովիչի կողմից իրեն բարոյագիտական դասեր տալու մասին*[35] (տարօրինակ է, բայց Ս. Մազարովիչի հասցեին արված չարախոսությունների հետ մեկտեղ կարելի է հանդիպել նաև նրա հոյակապ հատկանիշների մասին Ա. Գրիբոյեդովի հիացական նամակներին):[36]

Ուշագրավ է նաև 1820թ. հունիսի 25-ին դարձյալ Թավրիզից նույն Ն. Ա. Կախովսկուն ուղղված նամակը, որտեղ Ա. Գրիբոյեդովը գրում. «Ափսոս, որ Դուք այստեղ չեք: Մազարովիչը վերակառուցել է Ռուսական հոյակապ պալատը: Իմ տնակը, եթե այդպես հաճախ չճոճվի երկրաշարժերից, նայելու բան է Արևելքում: *Իսկ ինչպիսի՞ կանանց Դուք կգտնեիք ինձ մոտ, հատկապես*

---

[34] Грибоедов, его жизнь и гибель...с. 69.
[35] А. С. Грибоедов, Сочинения, т.2, с. 205-206.
[36] Նույն տեղում, էջ 189-191, 195

ոչ թե մեկին, այլ շատերին՝ մեկը մյուսից սքանչելի: Ո՞վ կարող էր սա կանխատեսել մի երկու ամիս առաջ:Սիրո ճամփաներն անիմանալի են...»:[37]

Կարծում ենք՝ պարզ է, որ խոսքն այստեղ ոչ թե փողոցային, այլ բարձրաշխարհիկ կանանց մասին է (այն էլ՝ մահմեդական երկրում – Վ. Ս.): Իսկ քանի որ բարձրաշխարհիկ կանայք միայն հարեմներում էին լինում, *ուրեմն նա սիրում էր «խցկվել ուրիշների հարեմները»*: Կարծում ենք, այս ամենը հաստատող անկախ մի վկայություն էլ կատարում է ծերունի Համբարձումը (Իբրահիմ բեկը – Վ. Ս.)՝ ասելով, որ 1829թ. հունվարին՝ գիշերով, երբեմն Վազիր-Սուխտարի (Ա. Գրիբոյեդովի – Վ. Ս.) մոտ դեսպանատուն էր գալիս շահի հարեմից մի շատ գեղեցիկ, երիտասարդ կին և խնդրում էր, որ իրեն ետ ուղարկեն հայրենիք:[38]

Հարց է ծագում՝ քանի՞ անգամ այդ կինը դեռ պետք է գնար ու գար (և Ա. Գրիբոյեդովն էլ չէր զգուշանում), որ վերջապես «ստացվեր» իր մեկնումը: Կամ էլ ինչո՞ւ Ալլահ-յար խանի երկու կանանց և Միրզա-Յակուբ Մարգարյանի նման այդ կնոջը ևս հենց առաջին անգամից Ա. Գրիբոյեդովը չպահեց դեսպանատանը: Այս հանգամանքը ևս մեծ դեր է կատարել հետագայում,[39] իսկ խորհրդային ուսումնասիրողները խուսափել են սա ևս լուսաբանելուց:

Թավրիզից Ն. Կախովսկուն հղած Ա. Գրիբոյեդովի վերոհիշյալ նամակները, ինչպես նաև հետագայում ծերունի Համբարձումի՝ 1829թ. մասին վկայությունները թերևս փաստում են, որ դիվանագիտական ծառայությունը Ա. Գրիբոյեդովի համար այնքան էլ առաջնային չէր, որ կնամեծարությունը նրա մոտ երբեմն հասնում էր կնամոլության, իսկ Պարսկաստանի նման մոլեռանդ մահմեդական երկրում, որտեղ երկյուղածությամբ և խոր ակնածանքով էին վերաբերվում նման հարցերին, դիվանագիտական լուրջ վրիպում կարելի է համարել նրա՝ երբեմն անգգույշ և ծանր հետևանքներով հղի պահվածքը, որը տարբեր առումներով առնչվում էր մահմեդականների համար սրբություն համարվող հարեմների հետ:

Կարծում ենք, որ 1829թ. հունվարյան ողբերգությունը ծնող *արտաքին ու ներքին ազդակներից մեկն էլ սա պետք է համարել*: Այս և որոշ հարցերի վրա, մեր կարծիքով, պատշաճ ուշադրություն չի դարձվել խորհրդային պատմագրության կողմից:

---

[37] Նույն տեղում, էջ 208

[38] "Кончина А. С. Грибоедова по армянским источникам", "Русская Старина", 1901, октябрь, с. 66-68, Տե՛ս նաև՝ Грибоедов, его жизнь и гибель...с. 199-201.

[39] Грибоедов, его жизнь и гибель...с. 254-255, (այստեղ Դ. Սմիռնովի և Ա. Ժանդրի զրույցները Ա. Գրիբոյեդովի վախճանի կապակցությամբ, հակասում են և՝ պաշտոնական ռազմագեկույցին (Реляция) (էջ 151-184), և՝ Իբրահիմ բեկի (էջ 199-201), և՝ Ի. Սիմոնիչի (էջ 202-206), և՝ Կ. Բոդեի (էջ 207-211) վկայություններին):